

**Արտատպված է՝ Շուրմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964:
Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:**

ԱՅՐՎԱԾԸ

— Մեր հրեաները, — գրույց է սկսում ճամփորդներից մեկը, իսկ մյուսները լսում են, — մեր հրեաները, հասկանո՞ւմ եք, թող աստված այսպիսի խոսքերիս համար ինձ չպատժի, տաքարյուն ժողովուրդ են, անհանգիստ... Հրեայի հետ միայն կուզիլ ուտես, մի աղոթագրքից աղոթք կարդաս և մեկ էլ պառկես նույն գերեզմանատանը... Մի խոսքով գրողի ծոցը գնան դրանք բոլորը:

Դուք կհարցնեք, թե ինչու եմ այսպես վրդովված ու զայրացած հրեաների վրա: Եթե ձեր գլուխն էլ գային այն փորձանքները, եթե ձեզ հետ էլ վարվեին այնպես, ինչպես ինձ հետ, դուք կհարձակվեիք մարդկանց վրա ու դազանակով կքոթակեիք: Բայց ես այնպիսիներից չեմ, որոնք կռվի մեջ են մտնում ամբողջ աշխարհի հետ: Ես այսպես եմ դատում՝ ինչ լինում է լինի: Կամ թե չէ, ինչպես այնտեղ ասված է՝ ամեն մարդ իր ձևով է ապրում: Իսկ այդ նշանակում է՝ թող աստված նրա հախից գա և թող գրողը բռնի նրա հոր բլից:

Ահա, լսեցեք: Ես ինքս, թող ձեզանից հեռու լինի, բոգուսլավցի եմ, Բուգուսլավ ավանից: Պատիկ ավան է, ինչպես ասում են՝ «պստիկ է, բայց ճստիկ», նրանցից, որոնց մասին ասում են — խիտ ցանիք, բայց թող սեփրակ բուսնեն... Եթե ուզում են որևէ մեկին ոնց որ պետք է պատժեն, Սիբիր ուղարկել պետք չէ... Ինչո՞ւ համար: Ավելի լավ է ուղարկեն մեզ մոտ, Բուգուսլավ, դարձնեն խանութպան, վարկ տան, որ կարողանա ոնց որ պետքն է, կոտր ընկնել, իսկ հետո, որպեսզի նրա մոտ հրդեհ ընկնի, այրվի մինչև վերջին թելը, իսկ բոգուսլավցիներն էլ ասեն, որ նա ինքն է «օրհնել արարչի հրեղեն կանթեղները», որ... Հասկանում եք, իհարկե, թե այդ մարդիկ ինչե՞ր կարող են գլուխներից դուրս տալ և ոչ միայն դուրս տալ, այլև գրել ուր հարկն է... Գրողի ծո՞ցը գնան դրանք, հա՛...

Այստեղից ձեզ, հավանաբար պարզ է, թե դուք ում հետ գործ ունեք: Ձեր առջև կանգնած է մի թշվառ մարդ, երիցս թշվառ, որովհետև նրա վրա երեք բեռ կա. առաջինը — հրեա եմ, երկրորդ՝ Բոգուսլավի բնակիչ եմ և երրորդ՝ Բոգուսլավի այրված և այն էլ ինչպիսի՜ այրված: Ես, հասկանում եք, այս տարի այրվեցի: Բայց ո՞նց այրվեցի: Ինչպես հարդե տանիք: Դուրս թռա, ոնց որ նետը աղեղից, ինչպես մորիցս ծնվել եմ... Եվ ինչպես լինում է նման դեպքերում, թարսի պես ես էլ տանը չէի: Իսկ որտեղ էի: Ոչ հեռու, Տարաշայում, քրոջս նշանդրեքին: Հոյակա՛պ նշանդրեք էր, ընթրի՛ք, պատվական հյուրե՛ր, հո Բոգուսլավի քոստոների թայր չե՞ն: Կարող եք պատկերացնել, որ հենց միայն դույլ ու կես օղի գնաց, չհաշված գարեջուրն ու զինին: Կարճ ասած, հրաշալի ժամանակ անցկացրինք. այսպես ասած՝ կամոքն աստծո... Եվ հանկարծ հեռագիր եմ ստանում. «Կինդ հիվանդ է, երեխեքդ հիվանդ են, գոքանչդ հիվանդ է, շատ ծանր է»: Դե, ես, իհարկե, երկու ոտ ունեի, երկուսն էլ փոխ առա ու հեծիմ ճամփա ընկա: Հասա տուն — հրաշալի՛ է: Ոչ տուն կա, ոչ խանութ, ոչ էլ մի բարձ կա, որ գլխիդ տակը դնես, ոչ շապիկ «ինչով եկել էի, նրանով էլ գնացի», այսինքն՝ մրից ելա մրջյուն ընկա... Կինս, խեղճն իրեն կոտորում է, երեխեքս նրան նայելով, իրենք էլ են նույնը անում: Տեղ չկա, որ գլուխդ ցած դնես: Դեռ լավ էր, որ ապահովագրված էի, ապահովագրված ինչպես պետքն է: Հասկանո՞ւմ եք, շան գլուխը հենց այստեղ է թաղված... Բայց դա դեռ փորձանքի կեսն է: Ցավն այն է, որ դա արդեն առաջին անգամը չէր. ես արդեն, իմացած կացեք, որ մի անգամ այրվել եմ դարձյալ գիշերը և դարձյալ՝ իմ բացակայությամբ... Բայց այն ժամանակ այդ ամենը, փառք աստծո, բարեհաջող անցավ. ներկայացավ տեսուչը, գրանցեց այրված ային-օյինը, գնահատեց վնասը,

գործը գնաց ըստ ամենայնի, մի տասանոց ավել, մի տասանոց պակաս և թո՛ղ գրողը բռնի դրանց հոր բկից...

Բայց դա այն ժամանակ էր: Իսկ այս անգամ աստված փրկի, ազատի, տեսուչին ուղարկեցին: Գազանից գազան: Եվ իմ քոռ բախտից՝ արծաթասեր չի: Չի վերցնում, թեկուզ ինչ ուզում ես արա: Եվ ահա նա փնտրտում է, տակնուվրա է անում, փորփրում է, քանդում է... Կաշվից դուրս է գալիս, որ իրեն բացատրեմ, թե հրդեհը ոնց պատահեց, ինչից և ինչքան ապրանք այրվեց: Եվ ինչու ոչ մի հետք չի մնացել:

— Իսկապես,— ասում եմ ես նրան:— Ես էլ եմ հենց այդ հարցնում: Գնա տեր աստծուց պատասխան պահանջիր:

— Ոչ,— պատասխանում է նա:— Այստեղ ինչ-որ բան այնպես չէ... Եվ մի կարծեք, թե դուք մեզանից շուտով փող կստանաք...

Հավանո՞ւմ եք այս խելքի տուպրակին: Նա, հասկանո՞ւմ եք, ինձ սպառնում է, թե՝ կեղծիք է: Ճիշտ մեր քննիչի նման, որ ուզում է խոսքի մեջ ինձ բռնեցնի: Սրա՛ն տեսեք, հենց իմանում է, խոխա է գտել:

— Ապա, ասա՛, Մոշկո,— ասում է նա,— ասա՛, սիրելիս, այդ ինչի՞ց է, որ դու ամեն անգամ այրվում ես:

Այսինքն՝ որ ես նրան բացատրեմ՝ ինչից, ինչու...

— Հրդեհից,— ասում եմ,— ձերդ գերազանցություն: Հենց հրդեհից էլ այրվել եմ...

— Իսկ ինչո՞ւ,— հարցնում է նա,— ապահովագրվել ես հրդեհից հենց երկու շաբաթ առաջ:

— Իսկ ի՞նչ կցանկանայիք, պանե, որ ես հրդեհից երկու շաբաթ հետո՞ ապահովագրեի...

— Իսկ ինչու ոչ մի անգամ տանը չես լինում, երբ հրդեհ է ընկնում:

— Իսկ եթե այդ ժամանակ ես տանը լինեի, դա ձեզ համար հաճելի՞ կլիներ:

— Իսկ ինչո՞ւ էին քեզ հեռագրում, թե երեխեքդ հիվանդ են, կինդ հիվանդ է, որ գոքանչդ մերձիմահ է:

— Այդ նրա համար, որ ես շուտ վերադառնայի:

— Ինչո՞ւ քեզ ճիշտը չէին գրում:

— Նրա համար, որ ես չվախենայի...

— Այդ դեպքում,— ասում է նա,— ես հասկանում եմ, թե դու ինչ պտուղն ես... Եվ թող քեզ հայտնի լինի, որ ես քեզ նստեցնելու եմ...

— Ինչո՞ւ համար: Ո՞ր մեղքիս համար,— հարցնում եմ:— Ի՞նչ բողոք ունեք ինձանից: Վերցնում եք մարդուն, որը ոչ մի հանցանք չունի, ու կործանում, ֆոկուս է, ինչ է, մարդուն մորթելը: Ուզում եք մորթել, մորթեցեք: Բայց մի մոռացեք, որ աշխարհում գոյություն ունի օրենք ու աստված:

— Դու դեռ շա՞տ պիտի խոսես աստծուց,— բռնկվում է նա,— ա՛յ քո էսենցն ու էնենցը...

Բայց ինչի՞ց պիտի վախենամ: Ես մաքուր եմ ինչպես ոսկին: Ինչպես ասված է. «Որ օգուտ չունես, մի՛ հակառակվի», որը նշանակում է, «ով որ սխտոր չի կերել, սիրտն էլ չի մոմում»: ...Եվ թող գրողը բռնի դրանց հոր բկից, և վե՛րջ ամենեցուն:

Եվ ամեն ինչ բարեհաջող կգնար, բայց Բոգուսլավը քնա՞ծ է, ինչ է, որ այդպես լինի, Բոգուսլավցու սիրտը կտանի՞, որ ինչ-որ մեկը փող ստանա ու մի քիչ շունչ քաշի: Եվ սկսեցին թղթեր գրել, այսինքն ամբաստանագրեր: Շատերը փոստով ուղարկեցին, մյուսներն էլ նեղություն էին քաշել ներկայացնել ապահովագրական ընկերություն և գրպարտել, որ այդ ես եմ «կանթեղները վառել»... Հասկանո՞ւմ եք, թե ինչի է ընդունակ ստոր արարածը: Ես, որպես թե, դիտմամբ եմ այդ օրը տնից հեռացել, որպեսզի... Հնարել էին սրիկաները... Որ ես երբեք այդքան ապրանք չեմ ունեցել, որքան որ ցույց եմ տվել, և որ հաշիվն ու դավթարները, որոնք ներկայացրել եմ, ուռճացված են, և որ իրենք կարող են այդ բանը ապացուցել ինչպես երկու անգամ երկու... Եվ ամեն տեսակի գրպարտություններ: Գրողը բռնի դրանց հոր բկի՛ց...

Բայց ո՞վ է նրանց լսողը, ասացեք խնդրեմ, երբ ես, համենայն դեպս, մաքուր եմ ինչպես ապակին: Այն, որ նրանք ասում են, որպես թե ես ինքս եմ այրել, ընդհանրապես դատարկ բան է: Ախր երեխեն էլ է հասկանում, որ եթե մեկը միտք ունի այդպիսի բան անելու, ապա նա ինքը չի անի... միշտ էլ «սպասարկող հրեշտակների» միջից մի առաքյալ կգտնի, որն այդ բանը երեքանոցով կանի... Բա ի՛նչ: Այդպես չէ՞: Հապա ձեզ մոտ ո՞նց է: Իսկ այն, որ ասում են, որպես թե ես դիտմամբ եմ տնից գնացել, պարզապես հիմարություն է: Ախր ինչ անեմ, որ քրոջս տանը նշանդրեք կար: Ես Տարաշչայում միևնուճար մի քույր ունեմ, նա մարդու էր տալիս իր միջնեկ աղջկան, ինչ է, նշանդրեքին չգնայի՞: Լա՞վ կլինեք: Իսկ դուք, ձեզ եմ հարցնում, դուք ինչպե՞ս կվարվեիք, եթե ունենայիք միևնուճար մի քույր և նա մարդու տար միջնեկ աղջկան: Դուք կնստեիք ձեր տանը և չէի՞ք մեկնի ձեր քրոջ մոտ՝ նշանդրեքի: Ոչ, ինչո՞ւ եք լռում: Թե՞ ես մարգարե պիտի լինեի ու գուշակեի, որ հենց այն ժամանակ, երբ իմ քույրը Տարաշչայում նշանելու է աղջկան, Բոգուսլավում, ինձ մոտ հրդեհ պիտի ընկնի: Չէ՞ որ դա մի բախտավորություն էր, որ գույքս ապահովագրված էր: Ես էլ հենց հիմիկվա հրդեհներից եմ ապահովագրել, է՛լի: Ամառը գալիս է թե չէ, հրդեհների ձեռքից փրկություն չկա: Հրդեհ՝ հրդեհի ետևից, մեկ Միլում, մեկ Բոբրոյսկում, մեկ Բեչիցայում, մեկ Բելոստոկում... Ժողովուրդը վառվո՞ւմ է: Ես էլ ահա մտածեցի. «Բոլոր մարդիկ եղբայրներ են», բոլորը վառվում են, իսկ ես որտե՞ղ եմ: Ինչո՞ւ, սարսաղի մեկը, հույսդ դնես խանութի վրա, հրաշքներ սպասես, երբ կարող ես ապահովագրվել: Իսկ եթե բանը դրան հասավ, ինչու չապահովագրես ինչպես պետքն է. «Թե որ խոզի միս ես ուտում, էնպես կեր, որ մորուքիցդ կաթի»: Գրողը նրան չի տանի, դա «ընկերություն» է, ինձ մի քանի ռուբլի տալով չի աղքատանա, և գրողի ծոցը գնան ու վե՛րջ ամենեցուն:

Եվ ես գնում եմ գործակալի մոտ ու ասում.

— Լսիր, Ջայնվլ, էսպես ու էսպես... Ժողովուրդը վառվում է, իսկ ես ինչու չվառվեմ... Ես ուզում եմ, որ դու ապահովագրես իմ խանութը:

— Լո՞ւրջ,— հարցնում է նա,— և մի տեսակ տարօրինակ քմծիծաղ տալով նայում ինձ:

— Էդ ի՞նչ ես ձիու նման ատամներդ ցույց տալիս,— ասում եմ նրան:

— Ես շատ ուրախ եմ,— ասում է նա,— և շատ եմ ափսոսում:

— Ի՞նչ է նշանակում՝ դու ուրախ ես և ափսոսում ես:

— Ես այն եմ ավստոսում,— ասում է,— որ մեկ անգամ արդեն ապահովագրել եմ և ուրախ եմ այն բանի համար, որ ինձ արդեն մեկ անգամ խաբել էք:

— Ե՞րբ եմ ես ձեզ խաբել:

— Այն ժամանակ, երբ դուք այրվեցիք:

— Գոնե ավելացնեիր, թող հիմա ասված չլինի: Անտա՛շի մեկը:

— Հիմա ասված չլինի: Էստեղ ասված չլինի: Ոչ ոքի համար ասված չլինի,— պատասխանում է նա և երեսիս ծիծաղում... Ահա թե ինչի է ընդունակ փուչ փչացած մարդը:

Կարող եք արդեն պատկերացնել, որ ես ուրիշ տեղ գտա ապահովագրվելու... Մե՛ծ բան էր, էլի: «Քի՛չ սատկած լեշ կա Եգիպտոսում»: Այսինքն՝ քի՛չ «ընկերություններ» գոյություն ունեն մեզ մոտ: Ողորմա՛ծ աստված: Շնից շատ գործակալ կա: Վերջապես մի ջահել գտա: Նա տնփեսա էր եղել և հենց նոր էր աներանց տնից հեռացել, դարձել էր «ընկերություններից» մեկի գործակալ և աշխատանք էր փնտրում... Դե, ինչ խոսք: Սա տեղնուտեղը ինձ ապահովագրեց և այն էլ տասը հազարով... Իսկ ինչու ոչ: Ինձ վայել չէ՞ խանութումս ունենալ ավելի շատ ապրանք, քան տասը հազարն է: «Ապրանքը շրջանառության մեջ է»: Այսինքն՝ հիմա չկա, վաղը կա... Ճիշտ է, բոգուսլավցիները հաստատում են, որ ես երբեք այդքան ապրանք չեմ ունեցել: Բայց նրանց ո՞վ է լսում: Թող ապացուցեն, թող ասեն, թող գլխներից դուրս տան, թող հաչեն, և թող գրողը բռնի նրանց հոր բկից և վերջ ամենեցուն:

Դեռ լավ էր, որ այդ ժամանակ, երբ խանութս ապահովագրում էի, Բոգուսլավում ոչ ոք չիմացավ, այդ պատճառով ամեն ինչ բարեհաջող գնաց... Եվ միայն այն ժամանակ, երբ դժբախտությունը պատահեց, այսինքն, երբ երկրորդ անգամ այրվեցի, Բոգուսլավի իմ բարեկամ-ծանոթները իրենց զցեցին գործակալների մոտ: Որտե՞ղ է ապահովագրված: Ո՞վ է ապահովագրել և ե՞րբ: Եվ ի՞նչ գումարով... Իսկ երբ իմացան տասը հազարով է, մի չտեսնված աղմուկ բարձրացրին՝ մինչև երկինք: Ո՞նց թե տասը հազար... Մոյշե-Մորդխեն պիտի տասը հազար ռուբլի ստանա՞: Տասը հազար ցավի գան դրանք: Իսկ ձե՞զ ինչ, որ Մոյշե-Մորդխեն պիտի ստանա տասը հազար: Վախենում եք, թե մի ռուբլի ավել լ վաստակի, հա՞: Իսկ եթե Մոյշե-Մորդխեն հրդեհի պատճառով ունեցած-չունեցածից զրկվեց, դուք նրան հատուցեցի՞ք... Հենց դրա համար էլ աստված Բոգուսլավը ստեղծել է: Աստվածապա՛շտ, ազնի՛վ մարդկանց այդ քաղաքը: Նրանք, պատկերացնո՞ւմ եք, անարդարություն չե՛ն կարող տանել... Կարող է թվալ, որ մարդուն, աչքի առաջ, ձեզ մոտ մի այդպիսի դժբախտություն է պատահել, հազիվ է հոգին փրկել, վնաս է կրել... Իսկ եթե վնաս չի կրել, ուրեմն ի՛նչ: Այսինքն, իհարկե, թող նրանց ջանին էնքան չիբան դուրս գա, ինչքան որ պիտի շահեմ... Թո՛ւ, թու՛, տասը հազարից պակաս. դե, հետո ինչ: Իսկ եթե ես այդ ամբողջ տասը հազարը հենց լավ էլ շահել եմ: Ի՞նչ ունեք ասելու: Ի՞նչ... Դրա պատճառով ո՞ւմ գլուխը պիտի ցավի: Մարդը վառվում է, թո՛ղ վառվի, ձեր ինչ բանն է, դո՛ւք էլ վառվեք, ամե՛նքդ էլ վառվեք: Դրության մեջ մտնել չգիտեն, որ խելքներին տան ու ասեն. միգուցե դա բարի գործ է: Միգուցե մարդը ծանրաբեռնված է ընտանիքով: Միգուցե պատրաստվում է աղջկան մարդու տալ, սքանչելի՛, ամեն տեսակի արժանիքների տեր աղջկան: Միգուցե վաղուց էր դրան սպասում ու հիմա փող էլ չունի, որ միջնորդին տա: Միգուցե տղի տեր է, ոսկի գլխով մի տղի, որն այրվում է սովորելու փափագից, իսկ սովորելու միջոց չունի: Միգուցե մարդը տանջվում է, տրորվում, վերջին հյուրերն իրենից քամում հանուն ո՞ւմ: Հանուն կնոջն ու զավակների: Դա ոչ ոք հաշվի առնել չի ուզում: Բոլորը հեռու կանգնած, աչքները չռած նայում են, թե հանկարծ աստված կգթա, այսինքն, ուզում եմ ասել, հանկարծ, աստված ոչ անի, ես այդ գործում վաստակեմ: Այդ ո՞ր հողվածով է հասնում ինձ այդպիսի բան, և թող գրողը առնի դրանց հոր հոգին ու վե՛րջ ամենեցուն:

Միայն թե, ճիշտը կասեմ ձեզ. այն, որ խանութպանները ինձ նախանձում են, դա էնքան չի վշտացնում. աղքատ ասածդ էլ հենց էդպես է լինում: Բայց հարուստներն ի՞նչ բան ունեն էդ գործի հետ: Ամենից շատ ինձ վրդովում է մեր հարուստի տղան: Մեր հարուստը մի տղա ունի, նրան ասում են «Մոյշե-խմաստունն ինչպե՞ս կասի»...: Հրաշալի տղա է, տաքարյուն, ոչ հիմար, և բարի էլ սիրտ ունի. չի հանդուրժում, զորօրինակ, որ տոկոսով փող են տալիս, առատաձեռն է, ճշմարտության համար սարի պես կանգնող և ընդհանրապես վատ երեխա չէ... Ամեն անգամ հանդիպելիս, ինձ կանգնեցնում է.

— Ինչպե՞ս եղավ ձեր գործը: Խե՛ղճ մարդ, լսել եմ, որ մեծ վնաս եք կրել:

Այդ ասելիս նա ձեռքը տանում է գրպանը, փորը դուրս գցում. հորթի աչքերով այնպես է նայում և այնպիսի դեմք է սարքում, որ ուզում ես թշերին շրխկացնես, ձեռքերդ ուղղակի քոր են գալիս...

Բայց թե ստիպված ես լռել, ճարդ ինչ... ինչպես ասում են. «Սատկած շանը մի՛ դիպչի...»: Թեկուզ երեսդ ծեծկի, մենակ թե կարմրաթուշ երևաս, միայն թե տար աստված, որ քննությունը վերջանար. ես, իմացած եղեք, որ դեռևս հետաքննության տակ եմ. ամեն անգամ քննիչը կանչում է ու ամեն տեսակ հարցեր տալիս... Դա ինձ հուզում է այնպես, ինչպես հերվա ձյունը, որովհետև ինքներդ ասացեք, ինչո՞ւ վախենամ, երբ ես մաքուր եմ ինչպես ոսկին: Բայց մինչև դատ ու դատաստան կլինի, ինձնից ստորագրություն վերցրին, որ քաղաքից չհեռանամ, իսկ ես, ինչպես տեսնում եք, արածս միայն այն է, որ բոգուսլավցիներին ճաքեցնելու համար, ճամփորդում եմ... «Դուռն ծեծող ամենայն մարդ թող ներս գա և ճաշակի»: Այսինքն, ուզում եմ ասել՝ ով ուզում է, թող ետևիցս գա, թող տեր աստծուն զանգատվի ինձանից, ա՛յ գրողը բռնի դրանց հոր բկից ու վերջ ամենեցուն:

Դուք չլինի՞ մտքներովդ անց եք կացնում, թե քանի որ ինձ վրա այդպիսի զանգատ կա, «ընկերությունը» չէր ցանկանա գործս յուր տանել: Թող այնքան չիբան դուրս գա մեր հարուստի տղայի սարսաղ սֆաթին, ինչքան հազար ես կարող էի ստանալ: Դուք, թերևս, կհարցնեք, հապա ինչո՞ւ ես դրանք չեմ ստանում: Դուք, ինչպես պետքն է, ինձ չգիտեք: Ես պետք է ձեզ խոստովանեմ, դառը մարդ եմ, մերկ ձեռքերով ինձ չես վերցնի: Ես գնում եմ իմ ճանապարհով. «Եթե արդեն գնում ես դեպի անկում», այսինքն, եթե այդպես է վիճակված, «ապա թող ընկնի». թող ինչպես լինում է, այնպես լինի: Իսկ քննությունն էլ թող իրեն համար անուշ կենա: Ինչի՞ց պիտի վախենամ: Ես, համենայն դեպս, մաքուր եմ ինչպես ապակին. Միայն վատն այն է, որ փողերս առժամանակ քարշ են գալիս, իսկ ես էլ այնպես նեղն եմ, հենց թեկուզ պարանը վերցրու ու խեղդվի: Այ, դա անտանելի է և սրտամաշ բան է, ճիշտ եմ ասում: Ախր ինչ որ պիտի ստանամ, թեկուզ ինչ էլ լինի, կստանամ, նրանց ոչինչ չի օգնի: Ուրեմն էլ ինչո՞ւ են իզուր ձգձգում: «Տվե՛ք իմ փողերը, պնդում եմ ես: Փողերս տվե՛ք: Ավագակնե՛ր: Մի՛ կործանեք երեխեքիս: Ուզածս ի՞նչ է: Տվե՛ք իմ տասը հազարը, իմ երեխեքի փողը: Մի՞ թե դրանք իմ փողերն են: Դրանք ախր, երեխեքիս փողերն են: Դե, ուրեմն, տվեք և ինձ հանգիստ թողեք և սատանան բռնի ձեր հոր բկից ու վերջ ամենեցուն...

Բայց ի՞նչ օգուտ իմ խոսելուց, իմ ճվոցից ու գոռոցից: Առայժմ որ անտանելի է, այնքան, որ ասել չեմ կարող: Գործից ընկա. աղջկաս նշանդեքը հետաձգվեց, օժիտ չկա, երեխեքին հարկավոր է ուսումի տալ, ամեն օր փող է, որ գնում է... Իսկ հապա տանջանքնե՛րը: Գիշերները չես քնում: Չնայած վախենալու բան չունես, ես, համենայն դեպս, մաքուր եմ ինչպես ոսկին: Այդուհանդերձ, ախր եղած-չեղածը մարդ ենք: Գլուխդ ի՞նչ տեսակ մտքեր ասես, որ չեն սողոսկում... Հետաքննություն... քննիչ... Բոգուսլավի հարևաններդ, որոնք պատրաստ են որպես վկա գնալ ու երդում տալ, որ իրենք տեսել են, թե ինչպես գիշերով, մութը ձեռքիս թրն եմ եկել ձեռնահարկում... Հանա՞ք եք անում բոգուսլավցիների հետ: Կհավատաք, որ ասեմ, մեզ մոտ մի ոմն Դովիդ-Գերշ կա... Ահա, ուրեմն, տա աստված ես և դուք այնքան վաստակենք, ինչքան փող, որ ես տվել եմ նրան, որ գլխից ավել-պակաս

դուրս չտա... Իսկ այնպես, ոչինչ, կարծես թե վատություն չի կամենում և կարգին էլ մարդ է, երեսիդ կծպտա և ամեն քայլափոխում աստծու անունը կտա՝ եթե աստծուն հաճելի կլինի, թե որ աստված օգնական եղավ... Եվ թող գրողը բռնի ձեռք հոր բկից ու վերջ լինի էս ամենին...

Հիմա դուք հասկացա՞ք, թե ինչ ասել է՝ Բոգուսլավ: Հիմա ձեզ համար պա՞րզ է, թե ինչու եմ այսպես տրամադրված: Սպասեցե՛ք, թող աստված օգնի ու ես ստանամ իմ մի քանի ռուբլին, ես նրանց ցո՛ւյց կտամ: Առաջին հերթին փող կբաշխեմ քաղաքի կարիքների համար, չեմ կարող ասել, թե որքան, բայց, իհարկե, ոչ պակաս, քան մեր հարուստները: Ես, հավատացած եղեք, նրանց առաջ ամոթով մնացողը չեմ: Թորան ընթերցելու ժամանակ սպասավորը կհայտարարի՝ «սինագոգին տասը ֆունտ մոմ նվիրողի՛ն», և այնպես բարձր, որ զրնգա և թող նրանք նախանձից պայթե՛ն: Հիվանդանոցի և թալմուդտորի մասին, որ ասել չարժե: Մի դյուծին կտավե շապիկ եմ նվիրում հիվանդներին և թալմուդտորի բոլոր աշակերտներին նոր «արբեկանֆեսներ»... իսկ հետո աղջկա հարսանիքն եմ անում: Բայց հարսանիք կա, հարսանիք էլ կա, կարծում եք, թե ես էլ ուրիշների նման գլուխս գովում եմ: Որ այդպես է, ուրեմն ինձ չեք ճանաչում: Որ բանը հասավ հարսանիքին, ես մի այնպիսի հարսանիք կանեմ, որ մեր նախահայրերն անգամ երագում չեն տեսել: Այդպիսի հարսանիք մեզ մոտ իսկի տեսած էլ չեն: Սինագոգի բակով մեկ վրան եմ սարքում: Ինձ թույլ եմ տալիս երաժիշտներ բերել հենց Սմելից: Երեսուն աղքատի համար սեղան եմ բացում, շքեղ ճաշկերո՛ւյթ, թխվածքնե՛ր, մի լավ թաս օղի և առատաձեռն բախշիչ հինգ կոպեկ՝ երկուսին: Իսկ հարսանեկան ընթրիքին հրավիրում եմ ամբողջ քաղաքը՝ ծայրից-ծայր... Իսկ իմ թշնամիներին, որոնք ուզում էին ինձ ջրի տակովն անել, նստեցնում եմ ամենապատվավոր տեղերում, կենացնե՛ր, պարե՛ր և նորից էլի պարեր: Նվագե՛ք, նվագե՛ք, երաժիշտներ, ինչքան ուժ ունեք և եկեք պարենք: ...Ահա թե ինչպիսի մարդ եմ ես: Դուք ինձ չե՛ք ճանաչում, հավատացնում եմ ձեզ: Ես եթե քեֆ եմ անում, ոչինչ չեմ ավստոսում. ապա մի շտոֆ օղի էլ և մի շտոֆ էլ, և «թող հոգիս կործանվի փղշտացիների հետ», այսինքն՝ խմեցե՛ք տղերք, քանի չեք պայթել և ռադ եղեք իմ տնից: Եվ թող գրողը բռնի ձեռք հոր բկից, ու վերջ ամենեցուն: